Կ-818-16.04.2024-ԳԿ-011

Նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գրադարանների եւ գրադարանային գործի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-90-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1) առաջին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) գրադարան՝ տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ ստորաբաժանում, որն ունի տարբեր ձևաչափերով ձևավորված տեղեկատվական ռեսուրսների համակարգված հավաքածու, ապահովում է դրանց մատչելի ֆիզիկական և էլեկտրոնային/թվային հասանելիությունը՝ նպաստելով հանրության տարբեր ներկայացուցիչներին կրթելու, իրազեկելու, ներգրավելու կամ ժամանացը կազմակերպելուն.».

2) 1-ին մասի 21-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ 22-րդ կետով.

«22) էլեկտրոնային գրադարան՝ գրադարանային ռեսուրսների և տեղեկատվության էլեկտրոնային/թվային հավաքածու, որն օժտված է որոնման և ուղղորդման համակարգերով և սահմանված պայմաններով ապահովում է այդ ռեսուրսների հասանելիությունը տեխնոլոգիական միջոցների, ներքին ցանցերի և համացանցի միջոցով.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Համայնքի մշակութային կյանքը ակտիվացնելու, հանրային ընթերցանության, գեղագիտական եւ մշակութային կրթությունը զարգացնելու, համայնքի բնակչության որակյալ ու բովանդակալից կյանքը կազմակերպելու նպատակով կարող են ստեղծվել մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոններ կամ նպատակին միտված ծառայությունները կենտրոնացնել համայնքում առկա մշակութային կամ ուսումնական հաստատություններում:»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) նպաստում է կրթությանը, ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցմանը.

2) 1-ին մասի 8-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

3) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով.

«9) նպաստում է գրադարանից օգտվողների մշակութային, ***կրթական, գիտական, տեղեկատվական,*** մտավոր ***(ինտելեկտուալ)***, գեղագիտական ***զարգացմանը, ժամանցի*** ու հանգստի կազմակերպմանը:

10) ստեղծում է էլեկտրոնային/թվային ռեսուրսների դասակարգված և որոնման համակարգերով օժտված շտեմարան՝ ապահովելով օգտվողների բաց կամ սահմանափակ հասանելիությունը տվյալներին.

11) ապահովում է էլեկտրոնային/թվային բովանդակությունը չարտոնված մուտքից պաշտպանելու և էլեկտրոնային/թվային ռեսուրսների ամբողջականությունը պահպանելու անվտանգային միջոցներ:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հանրային գրադարանի կարգավիճակ ստացած գրադարանը տեղեկատվության տեղական կենտրոն և գիտելիքահենք հասարակության էական բաղադրիչ է, որը շարունակաբար յուրացնում է հաղորդակցության նոր միջոցները, ապահովում համընդհանուր հասանելիություն և միջավայր՝ տեղեկատվության օգտագործման, գիտելիքի, տեղեկատվության, մշակույթի տարածման և փոխանակման, ինչպես նաև քաղաքացիական ներգրավվածության խթանման համար:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետով.

«4.1) պարտադիր օրինակի հիման վրա կազմում և հրատարակում է ազգային մատենագիտությունը արձանագրող հրատարակությունների ցանկերը.»:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) ***6-րդ մասը «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել՝ «, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերի:» բառերը,***
2) ***լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս.***

«6.1. Էլեկտրոնային/թվային գրադարանային հավաքածուն կարող են հասանելի լինել անվճար և վճարով հիմունքներով, ինչպես նաև սպասարկվել բաց կամ սահմանափակ հասանելիությամբ:».

3) լրացնել 9.1-րդ և 9.2-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ՝

«9.1. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները չպետք է ենթարկվեն որևէ տիպի գաղափարական, քաղաքական կամ կրոնական գրաքննության կամ առևտրային ճնշումների:

9.2. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները պետք է ներառեն տարբեր տեսակի կրիչներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես նաև ավանդական նյութեր:»:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 13-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) 1-ին մասը լրացնել ***հետեւյալ բովանդակությամբ*** 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ կետերով.

«14) ապահովում է արտերկրի գրադարաններում հայկական գրավոր հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքները եւ հայագիտական ***հավաքածուի*** համալրումը՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակներում.

15) սահմանում է գրադարանային աշխատողների պաշտոնների ***անվանացանկը և դրանց*** օրինակելի նկարագիրը.

16) հաստատում է ***հանրային*** գրադարան***ների*** աշխատողների ատեստավորման, ***ինչպես նաև ատեստավորող հանձնաժողովի ձևավորման կարգը***

17) ապահովում է հանրային գրադարանների ***գործառույթների իրականացման*** նկատմամբ մշտադիտարկում:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ հոդվածով.

«Հոդված 17.1. Գրադարանային աշխատողը, նրա իրավունքները եւ պարտականությունները

1. Գրադրանային աշխատողը այն անձն է, ով իրականացնում է գրադարանային գործառույթներ՝ համաձայն պաշտոնի նկարագրի: Գրադարանային աշխատողի կարգավիճակը, գրադարանային աշխատողներների պաշտոնների անվանացանկը և դրանց օրինակելի նկարագիրը սահմանում է գրադարանային գործի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը:

2. Հանրային գրադարանի աշխատողի զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով իրականացվում է ատեստավորում:

3. Սույն օրենքով հանրային գրադարանի կարգավիճակ չունեցող այլ գրադարանների աշխատողների ատեստավորումը կարող է իրականացվել հիմնադրի որոշումով կամ գրադարանային աշխատողի նախաձեռնությամբ:

4. Գրադարանի աշխատողը գրադարանի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով կարող է անցնել վերապատրաստում՝ գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած վերապատրաստման ծրագրի ուղղություններին համապատասխան:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով:

6. Ատեստավորման հանձնաժողովը գրադարանի աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:

7. Ատեստավորման գործընթացում հանրային գրադարանի աշխատողի ցուցաբերած արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման համար:

8. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է հանրային գրադարանի աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման:

7. Գրադարանի աշխատողն իրավունք ունի՝

1) օրենքով սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում իրականացնելու, գրադարանների բնագավառում մասնագիտական գործունեություն՝ իր կրթությանը, որակավորմանը եւ մասնագիտացմանը համապատասխան,

2) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

3) օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իր մասնագիտական համբավը, պատիվը եւ արժանապատվությունը.

4) ստանալու աշխատանքին համարժեք վարձատրության՝ առանց որեւէ խտրականության.

5) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության այլ իրավունքներից եւ երաշխիքներից.

6) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

8. Գրադարանային աշխատողի պարտականություններն են՝

1) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել լիազոր պետական մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան.

2) իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կատարել գրադարանային գործի ընթացակարգերով սահմանված գործառույթները՝ պահպանելով օրենսդրության պահանջները.

3) պահպանել գրադարանի աշխատողի վարքագծի կանոնակարգի պահանջները:»

Հոդված 8. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1 Գրադարանների ծառայությունները և տնտեսական գործունությունը

1. Գրադարաններ***ում կազմակերպվող ծառայությունները հիմնականում միտված են տեղեկատվական,*** գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային եւ հանգստի կազմակերպման նպատակներ***ին, ընթերցանության խթանմանը, գրադարանային հավաքածուների հանրահռչակմանը,*** ինչպես նաեւ իրենց գործառնական նշանակության ***արդյունավետ իրացմանը:***

2. Գրադարանները ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ գործունեության տեսակներով:

3. Գրադարանները կարող են իրենց օգտագործման և սեփականության հանձնված գույքն ու տարածքները օգտագործել կամ հանձնել օգտագործման ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ տեսակները իրականացման համար.

1) հուշանվերների պատրաստում եւ վաճառք,
2) լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպում, իրականացում՝ ոչ ֆորմալ ուսումնառության ձևերով,
3) հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն (գրքեր, պարբերականներ, գրասենյակային թղթե պիտույքների պատրաստում), վաճառք
4) կինո- ու տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի իրականացում,
5) ցուցահանդեսների կազմակերպում,
6) սրճարանային գործունեություն,
7) ժամանցային մշակութային միջոցառումների անցկացում,

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանած գործունեության տեսակները կարող են իրականացվել գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ, եթե դրանց իրականացումը չի հակասում գրադարանի հիմնական գործունեությանը:»:

5. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է տվյալ գրադարանի կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

6. Գրադարաններին հանձնված շենքերում եւ տարածքներում արգելվում է իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել գրադարանային հավաքածուների ամբողջականությունը կամ խոչընդոտում է գրադարանի հիմնական գործառույթների և սպասարկման ծառայությունների կազմակերպմանը, հակասում է գրադարանների օգտագործման նպատակներին:

7. Արգելվում է գրադարանների օգտագործումը քաղաքական գործունեության նպատակով:

8. Գրադարանային հավաքածուի պահպանության կանոնները խախտելու հետևանքով վնաս պատճառելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործունեությունն իրականացնելու ընթացքում վնաս պատճառելու դեպքում՝ վնաս պատճառած քաղաքացիները, կազմակերպությունները, գրադարանի աշխատակիցները կամ պաշտոնատար անձիք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը սեփական միջոցների հաշվին, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մտնելուց հետո՝ ***ինն*** ամսվա ընթացքում:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-818-16.04.2024-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գրադարանների եւ գրադարանային գործի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-90-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1) Առաջին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) գրադարան՝ *տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ ստորաբաժանում, որն ունի տարբեր ձևաչափերով ձևավորված տեղեկատվական ռեսուրսների համակարգված հավաքածու, ապահովում է դրանց մատեչելի ֆիզիկական և էլեկտրոնային/թվային հասանելիությունը՝ նպաստելով հանրության տարբեր ներկայացուցիչներին կրթելու, իրազեկելու, ներգրավելու կամ ժամանցը կազմակերպելուն.».*

~~1~~2) 1-ին մասի 21-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ~~նոր~~ 22-րդ կետով, ~~23-րդ եւ 24-րդ կետերով~~.

~~22) **Էլեկտրոնային գրադարան**՝ տարատեսակ էլեկտրոնային փաստաթղթերի հավաքագրված ժողովածու կամ տվյալների շտեմարան, որն օժտված է որոնման եւ ուղղորդող հարմարանքներով: Այն կարող է լինել վեբ կայքի կամ էլեկտրոնային կրիչների տեսքով.~~

*«22) **Էլեկտրոնային գրադարան՝** գրադարանային ռեսուրսների և տեղեկատվության էլեկտրոնային/թվային հավաքածու, որն օժտված է որոնման և ուղղորդման համակարգերով և սահմանված պայմաններով ապահովում է այդ ռեսուրսների հասանելիությունը տեխնոլոգիական միջոցների, ներքին ցանցերի և համացանցի միջոցով.»:*

~~23) **Էլեկտրոնային հրատարակություն**՝ էլեկտրոնային ձեւով ներկայացված տեղեկություն կամ ժողովածու, որն անցել է խմբագրական եւ հրատարակչական մշակում.~~

~~24) **մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոն**՝ համայնքի մշակութային կյանքի ակտիվացման, հանրային ընթերցանության, գեղագիտական եւ մշակութային կրթության զարգացման, համայնքի բնակչության որակյալ ու բովանդակալից կյանքի կազմակերպման վայր:»:~~

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Համայնքի մշակութային կյանքը ակտիվացնելու, հանրային ընթերցանության, գեղագիտական եւ մշակութային կրթությունը զարգացնելու, համայնքի բնակչության որակյալ ու բովանդակալից կյանքը կազմակերպելու նպատակով կարող են ստեղծվել մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոններ կամ նպատակին միտված ծառայությունները կենտրոնացնել համայնքում առկա մշակութային կամ ուսումնական հաստատություններում:»:

Հոդված ~~2~~ 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) նպաստում է կրթությանը, ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցմանը.»,

~~1~~2) 1-ին մասի 8-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ~~նոր~~ 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով. ~~հետեւյալ բովանդակությամբ.~~

«9) նպաստում է գրադարանից օգտվողների մշակութային, կրթական, գիտական, տեղեկատվական, մտավոր (ինտելեկտուալ), գեղագիտական զարգացման, ~~կյանքի խթանմանը~~ ժամանցի ու հանգստի կազմակերպմանը:

10) ստեղծում է էլեկտրոնային/թվային ռեսուրսների դասակարգված և որոնման համակարգերով օժտված շտեմարան՝ ապահովելով օգտվողների բաց կամ սահմանափակ հասանելիությունը տվյալներին.

11) ապահովում է թվային բովանդակությունը չարտոնված մուտքից պաշտպանելու և էլեկտրոնային/թվային ռեսուրսների ամբողջականությունը պահպանելու անվտանգային միջոցներ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հանրային գրադարանի կարգավիճակ ստացած գրադարանը տեղեկատվության տեղական կենտրոն և գիտելիքահենք հասարակության էական բաղադրիչ է, որը շարունակաբար յուրացնում է հաղորդակցության նոր միջոցները, ապահովում համընդհանուր հասանելիություն և միջավայր՝ տեղեկատվության օգտագործման, գիտելիքի, տեղեկատվության, մշակույթի տարածման և փոխանակման, ինչպես նաև քաղաքացիական ներգրավվածության խթանման համար:

Հոդված 4. *Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետերով.*

«4.1) պարտադիր օրինակի հիման վրա կազմում և հրատարակում է ազգային մատենագիտությունը արձանագրող հրատարակությունների ցանկերը.»:

Հոդված 5. *Օրենքի 11-րդ հոդվածը՝*

3) 6-րդ մասը «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել՝ «, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերի:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս.

«6.1. Էլեկտրոնային/թվային գրադարանային հավաքածուները կարող են հասանելի լինել անվճար և վճարով հիմունքներով, ինչպես նաև սպասարկվել բաց կամ սահմանափակ հասանելիությամբ:».

3) լրացնել 9.1-րդ և 9.2-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ՝

«9.1. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները չպետք է ենթարկվեն որևէ տիպի գաղափարական, քաղաքական կամ կրոնական գրաքննության կամ առևտրային ճնշումների:

9.2. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները պետք է ներառեն տարբեր տեսակի կրիչներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես նաև ավանդական նյութեր:»:

Հոդված ~~3~~6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 13-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ~~նոր~~ 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ կետերով ~~հետեւյալ բովանդակությամբ~~.

«14) ապահովում է արտերկրի գրադարաններում հայկական գրավոր հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքները եւ հայագիտական ~~ֆոնդի~~ հավաքածուի

համալրումը՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակներում.

15) սահմանում է գրադարանային աշխատողների պաշտոնների *անվանացանկը և դրանց* օրինակելի նկարագիրը.

16) հաստատում է ~~պետական~~ հանրային գրադարանների ~~ային~~ աշխատողների ատեստավորման*, ինչպես նաև~~-~~ ատեստավորող հանձնաժողովի ձևավորման* կարգը~~.~~

17) ապահովում է հանրային գրադարանների գործառույթների իրականացման նկատմամբ մշտադիտարկում:»:

Հոդված 7. *Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ հոդվածով.*

«Հոդված 17.1. Գրադարանային աշխատողը, նրա իրավունքները եւ պարտականությունները

1. Գրադրանային աշխատողը այն անձն է, ով իրականացնում է գրադարանային գործառույթներ՝ համաձայն պաշտոնի նկարագրի: Գրադարանային աշխատողի կարգավիճակը, գրադարանային աշխատողներների պաշտոնների անվանացանկը և դրանց օրինակելի նկարագիրը սահմանում է գրադարանային գործի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը:

2. Հանրային գրադարանի աշխատողի զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով իրականացվում է ատեստավորում:

3. Սույն օրենքով հանրային գրադարանի կարգավիճակ չունեցող այլ գրադարանների աշխատողների ատեստավորումը կարող է իրականացվել հիմնադրի որոշումով կամ գրադարանային աշխատողի նախաձեռնությամբ:

4. Գրադարանի աշխատողը գրադարանի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով կարող է անցնել վերապատրաստում՝ գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած վերապատրաստման ծրագրի ուղղություններին համապատասխան:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով:

6. Ատեստավորման հանձնաժողովը գրադարանի աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:

7. Ատեստավորման գործընթացում հանրային գրադարանի աշխատողի ցուցաբերած արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման համար:

8. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշման հիման վրա հանրային գրադարանի աշխատողի հետ փվյալ պաշտոնի համար կնքված աշխատանքային պայմանագրի լուծման:

7. Գրադարանի աշխատողն իրավունք ունի՝

1) օրենքով սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում իրականացնելու գրադարանների բնագավառում մասնագիտական գործունեություն՝ իր կրթությանը, որակավորմանը եւ մասնագիտացմանը համապատասխան,

2) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

3) օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իր մասնագիտական համբավը, պատիվը եւ արժանապատվությունը.

4) ստանալու աշխատանքին համարժեք վարձատրության՝ առանց որեւէ խտրականության.

5) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության այլ իրավունքներից եւ երաշխիքներից.

6) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

8. Գրադարանային աշխատողի պարտականություններն են՝

1) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել լիազոր պետական մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան.

2) իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կատարել գրադարանային գործի ընթացակարգով սահմանված գործառույթները՝ պահպանելով օրենսդրության պահանջները.

3) պահպանել գրադարանի աշխատողի վարքագծի կանոնակարգի պահանջները:»

Հոդված 48. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ~~նոր~~ 21.1-ին հոդվածով.

«*Հոդված 21.1 Գրադարանների ~~օգտագործումը~~ ծառայությունները և տնտեսական գործունությունը*

9. ~~1.~~Գրադարաններում կազմակերպվող ծառայությունները հիմնականում միտված են ~~ը գերազանցապես օգտագործվում են~~ տեղեկատվական, գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային եւ հանգստի կազմակերպման նպատակներին, ~~ով,~~ ընթերցանության խթանմանը, գրադարանային հավաքածումների հանրահռչակմանը, ինչպես նաեւ իրենց գործառնական նշանակության ~~մբ~~ արդյունավետ իրացմանը:

~~2. Գրադարանի տարածքի օգտագործումը տնտեսական նպատակներով (հուշանվերների պատրաստում եւ վաճառք, կրթական ծրագրերի իրականացում, գրքերի, պարբերական հրատարակությունների հրատարակում եւ այլ հրատարակչական գործունեություն, գրասենյակային թղթե պիտույքների պատրաստում ու իրացում, կինո- ու տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի իրականացում, առեւտրային ցուցահանդեսների կազմակերպում, սրճարանային գործունեություն, թայմ-շեր ծառայությունների (որոշակի ժամանակահատվածում գրադարանի գույքից օգտվելու իրավունքի ձեռքբերում), սպորտային, զվարճալի, մշակութային միջոցառումների համար տեղերի ապահովում եւ այլն) թույլատրվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի համաձայնությամբ՝ եթե այն չի հակասում գրադարանի հիմնական գործունեությանը:»:~~

10. Գրադարանները ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ գործունեության տեսակներով:

11. Գրադարանները կարող են իրենց օգտագործման և սեփականության հանձնված գույքն ու տարածքները օգտագործել կամ հանձնել օգտագործման ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ տեսակները իրականացման համար.

8) հուշանվերների պատրաստում եւ վաճառք,

9) լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպում, իրականացում՝ ոչ ֆորմալ ուսումնառության ձևերով,

10) հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն (գրքեր, պարբերականներ, գրասենյակային թղթե պիտույքների պատրաստում), վաճառք

11) կինո- ու տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի իրականացում,

12) ցուցահանդեսների կազմակերպում,

13) սրճարանային գործունեություն,

14) ժամանցային մշակութային միջոցառումների անցկացում,

12. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանած գործունեության տեսակները կարող են իրականացվել գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ, եթե դրանց իրականացումը չի հակասում գրադարանի հիմնական գործունեությանը:»:

13. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է տվյալ գրադարանի կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

14. Գրադարաններին հանձնված շենքերում եւ տարածքներում արգելվում է իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել գրադարանային հավաքածուների ամբողջականությունը կամ խոչընդոտում է գրադարանի հիմնական գործառույթների և սպասարկման ծառայությունների կազմակերպմանը, հակասում է գրադարանների օգտագործման նպատակներին:

15. Արգելվում է գրադարանների օգտագործումը քաղաքական գործունեության նպատակով:

16. Գրադարանային հավաքածուի պահպանության կանոնները խախտելու հետևանքով վնաս պատճառելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործունեությունն իրականացնելու ընթացքում վնաս պատճառելու դեպքում՝ վնաս պատճառած քաղաքացիները, կազմակերպությունները, գրադարանի աշխատակիցները կամ պաշտոնատար անձիք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը սեփական միջոցների հաշվին, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված ~~5~~***9.*** Եեզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մտնելուց հետո՝ ~~վեց~~ ինն ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-818-16.04.2024-ԳԿ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածներ	1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների 1-ին մասերում՝ «վերջակետը փոխարինել միջակետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով» բառերով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Հոդված 1. Մաս 1.	Խմբագրել «Գրադարան» հասկացությունը, այն համապատասխանեցնելով ներկայիս գրադարանային համակարգի խնդիրներին, նախատեսելով նաև էլեկտրոնային(թվային) հավաքածուների և դրանց հասանելիության նախապայմանը: Որպես մոտեցում ընդունել, որ էլ.գրադարանը գրադարանային գործի կազմակերպման եղանակ է և տեխնոլոգիական միջոց: Այսպիսով՝ հաշվի առնելով վերոնշյալը. 1. 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«1) գրադարան՝ տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ ստորաբաժանում, որն ունի տարբեր ձևաչափերով ձևավորված տեղեկատվական ռեսուրսների համակարգված հավաքածու, ապահովում է դրանց մատեչելի ֆիզիկական և էլեկտրոնային/թվային հասանելիությունը՝ նպաստելով հանրության տարբեր ներկայացուցիչներին կրթելու, իրազեկելու, ներգրավելու կամ ժամանացը կազմակերպելուն.». --- 2. Նախագծով առաջարկվող 23-րդ և 24-րդ կետերը հանել, կարգավորումները սահմանելով օրենքի հոդվածներում --- 3. Նախագծով առաջարկվող 22-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «22) Էլեկտրոնային գրադարան՝ գրադարանային ռեսուրսների և տեղեկատվության էլեկտրոնային/թվային հավաքածու, որն օժտված է որոնման և ուղղորդման համակարգերով և սահմանված պայմաններով ապահովում է այդ ռեսուրսների հասանելիությունը տեխնոլոգիական միջոցների, ներքին ցանցերի և համացանցի միջոցով.»:		
3.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր հոդված 2, Հոդված 2-ը փոխարինե հոդված Հոդված 3.	Հոդված 1-ի 24-րդ կետի լրացումը սահմանել որպես 6-րդ հոդվածի դրույթ: Այսպիսով՝ Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Համայնքի մշակութային կյանքը ակտիվացնելու,	Ընդունվել է	Ընդունվել է

			հանրային ընթերցանության, գեղագիտական եւ մշակութային կրթությունը զարգացնելու, համայնքի բնակչության որակյալ ու բովանդակալից կյանքը կազմակերպելու նպատակով կարող են ստեղծվել մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոններ կամ նպատակին միտված ծառայությունները կենտրոնացնել համայնքում առկա մշակութային կամ ուսումնական հաստատություններում:»:		
4.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նախկին հոդված 2՝ նոր հոդած 3.	Լրացնել նոր 1-ին կետ՝ խմբագրելով 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը. «1) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1) նպաստում է կրթությանը, ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցմանը. »,	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն		1-ին կետը համարակալել որպես 2-րդ, 2-րդը 3-րդ կետ, լրացնել նոր՝ 10-րդ և 11-րդ կետեր և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 3) 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով. «9) նպաստում է գրադարանից օգտվողների մշակութային, կրթական, գիտական, տեղեկատվական, մտավոր (ինտելեկտուալ), գեղագիտական զարգացմանը, ժամանցի ու հանգստի կազմակերպմանը: 10) ստեղծում է էլեկտրոնային/թվային ռեսուրսների	Ընդունվել է	Ընդունվել է

			դասակարգված և որոնման համակարգերով օժտված շտեմարան՝ ապահովելով օգտվողների բաց կամ սահմանափակ հասանելիությունը տվյալներին. 11) ապահովում է էլեկտրոնային/թվային բովանդակությունը չարտոնված մուտքից պաշտպանելու և էլեկտրոնային/թվային ռեսուրսների ամբողջականությունը պահպանելու անվտանգային միջոցներ:»:		
6.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նախկին հոդված 2՝ նոր հոդած 3.	Օրենքի 7-րդ հոդվածում ՝ 4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս. «2. Սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հանրային գրադարանի կարգավիճակ ստացած գրադարանը տեղեկատվության տեղական կենտրոն և գիտելիքահենք հասարակության էական բաղադրիչ է, որը շարունակաբար յուրացնում է հաղորդակցության նոր միջոցները, ապահովում համընդհանուր հասանելիություն և միջավայր՝ տեղեկատվության օգտագործման, գիտելիքի, տեղեկատվության, մշակույթի տարածման և փոխանակման, ինչպես նաև քաղաքացիական ներգրավվածության խթանման համար:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր հոդված 4.	Լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետով. «4.1) պարտադիր օրինակի հիման վրա կազմում և հրատարակում է ազգային մատենագիտությունը	Ընդունվել է	Ընդունվել է

			արձանագրող հրատարակությունների ցանկերը.»:		
8.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր 5-րդ հոդված	Սահմանելու համար էլեկտրոնային (թվային) ռեսուրսների և գրադարանային հավաքածուների կարգավորման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև էլ. տվյալների պաշպանվածություն, Օրենքի 11-րդ հոդվածում կատարել լրացումներ. «Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝ 1) 6-րդ մասը «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել՝ «, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերի:» բառերը, 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս. «6.1. Էլեկտրոնային/թվային գրադարանային հավաքածուն կարող են հասանելի լինել անվճար և վճարով հիմունքներով, ինչպես նաև սպասարկվել բաց կամ սահմանափակ հասանելիությամբ:». 3) լրացնել 9.1-րդ և 9.2-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ՝ «9.1. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները չպետք է ենթարկվեն որևէ տիպի գաղափարական, քաղաքական կամ կրոնական գրաքննության կամ առևտրային ճնշումների: 9.2. Գրադարանային հավաքածուները և ծառայությունները պետք է ներառեն տարբեր տեսակի կրիչներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես նաև ավանդական նյութեր:»:	Ընդունվել է	Ընդունվել է

9.	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր 6-րդ հոդված, Նախկին 3-րդ	Նախագծի 2-րդ կետում առաջարկվող օրենքի 13-րդ հոդվածում լրացվող կետերում՝ ա) 14-րդ կետում՝ «ֆոնդ» բառը փոխարինել «հավաքածու» բառով, բ) 15-րդ կետում՝ «պաշտոնների» բառից հետո լրանցել՝ «անվանացանկը և դրանց» բառերը, գ) 16-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «16) հաստատում է հանրային գրադարանների աշխատողների ատեստավորման, ինչպես նաև ատեստավորող հանձնաժողովի ձևավորման կարգը», դ) «գրադարանների» բառից հետո լրացնել «գործառույթների իրականացման» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
10	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր 7-րդ հոդված	Սահմանելու համար նախագծով նախատեսված գրադարանային աշխատողների ատեստավորման հետ կապված հարաբերությունները և նախապայմանները, նախագծով լրացնել նոր 7-րդ հոդված՝ օրենքում 17.1-րդ հոդված լրացնելու վերաբերյալ և շարադրել հետյևալ կերպ. Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ հոդվածով. «Հոդված 17.1. Գրադարանային աշխատողը, նրա իրավունքները եւ պարտականությունները 1. Գրադրանային աշխատողը այն անձն է, ով իրականացնում է գրադարանային գործառույթներ՝ համաձայն պաշտոնի նկարագրի: Գրադարանային աշխատողի կարգավիճակը, գրադարանային աշխատողներների պաշտոնների անվանացանկը և	Ընդունվել է	Ընդունվել է

			դրանց օրինակելի նկարագիրը սահմանում է գրադարանային գործի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը: 2. Հանրային գրադարանի աշխատողի զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով իրականացվում է ատեստավորում: 3. Սույն օրենքով հանրային գրադարանի կարգավիճակ չունեցող այլ գրադարանների աշխատողների ատեստավորումը կարող է իրականացվել հիմնադրի որոշումով կամ գրադարանային աշխատողի նախաձեռնությամբ: 4. Հանրային գրադարանի աշխատողը գրադարանի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով կարող է անցնել վերապատրաստում՝ գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած վերապատրաստման ծրագրի ուղղություններին համապատասխան: 5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով: 6. Ատեստավորման հանձնաժողովը գրադարանի աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում: 7. Ատեստավորման գործընթացում հանրային		

			գրադարանի աշխատողի ցուցաբերած արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման համար: 8. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է հանրային գրադարանի աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման: 7. Գրադարանի աշխատողն իրավունք ունի՝ 1) օրենքով սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում իրականացնելու, գրադարանների բնագավառում մասնագիտական գործունեություն՝ իր կրթությանը, որակավորմանը եւ մասնագիտացմանը համապատասխան, 2) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին. 3) օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իր մասնագիտական համբավը, պատիվը եւ արժանապատվությունը. 4) ստանալու աշխատանքին համարժեք վարձատրության՝ առանց որեւէ խտրականության. 5) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության այլ իրավունքներից եւ երաշխիքներից. 6) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից: 8. Գրադարանային աշխատողի պարտականություններն են՝ 1) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել լիազոր պետական մարմնի հաստատած		

			մասնագիտական բնութագրին համապատասխան. 2) իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կատարել գրադարանային գործի ընթացակարգերով սահմանված գործառույթները՝ պահպանելով օրենսդրության պահանջները. 3) պահպանել գրադարանի աշխատողի վարքագծի կանոնակարգի պահանջները:»		
11	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր 8-րդ հոդված, Նախկին 4-րդ	Հոդվածը խմագրել, խմբավորել և նախատեսել գրադարանների կողմից ձեռնարկատիրական գործունեության պայմաններում շահույթի օգտագործման և գույքի պաշպանվածության հետ կապված հարաբերությունները: Այսպիսով՝ **Հոդված 8.** Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով. «Հոդված 21.1 Գրադարանների ծառայությունները և տնտեսական գործունությունը 1. Գրադարաններում կազմակերպվող ծառայությունները հիմնականում միտված են տեղեկատվական, գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային եւ հանգստի կազմակերպման նպատակներին, ընթերցանության խթանմանը, գրադարանային հավաքածուների հանրահռչակմանը, ինչպես նաեւ իրենց գործառնական նշանակության արդյունավետ իրացմանը: 2. Գրադարանները ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ գործունեության տեսակներով: 3. Գրադարանները կարող են իրենց օգտագործման և սեփականության հանձնված գույքն ու տարածքները	Ընդունվել է	Ընդունվել է

			օգտագործել կամ հանձնել օգտագործման ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ տեսակները իրականացման համար. 1) հուշանվերների պատրաստում եւ վաճառք, 2) լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպում, իրականացում՝ ոչ ֆորմալ ուսումնառության ձևերով, 3) հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն (գրքեր, պարբերականներ, գրասենյակային թղթե պիտույքների պատրաստում), վաճառք 4) կինո- ու տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի իրականացում, 5) ցուցահանդեսների կազմակերպում, 6) սրճարանային գործունեություն, 7) ժամանցային մշակութային միջոցառումների անցկացում, 4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանած գործունեության տեսակները կարող են իրականացվել գրադարանային գործի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ, եթե դրանց իրականացումը չի հակասում գրադարանի հիմնական գործունեությանը:»: 5. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է տվյալ գրադարանի կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: 6. Գրադարաններին հանձնված շենքերում եւ տարածքներում արգելվում է իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել գրադարանային հավաքածունների		

			ամբողջականությունը կամ խոչընդոտում է գրադարանի հիմնական գործառույթների և սպասարկման ծառայությունների կազմակերպմանը, հակասում է գրադարանների օգտագործման նպատակներին: 7. Արգելվում է գրադարնների օգտագործումը քաղաքական գործունեության նպատակով: 8. Գրադարանային հավաքածուի պահպանության կանոնները խախտելու հետևանքով վնաս պատճառելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործունեությունն իրականացնելու ընթացքում վնաս պատճառելու դեպքում՝ վնաս պատճառած քաղաքացիները, կազմակերպությունները, գրադարանի աշխատակիցները կամ պաշտոնատար անձիք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը սեփական միջոցների հաշվին, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:		
12	ԱԺ պատգ. Թագուհի Ղազարյան Կառավարություն	Նոր հոդված 9, Հին՝ 5	Հոդված 5-րդը համարակալել որպես հոդված 9. 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «ինն»	Ընդունվել է	Ընդունվել է